ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 24 » նոյեմբեր 2025թ. No 7227 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 5236-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/5622-25 առ 17.11.2025թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի հավաստագրի ժամկետի երկարաձգման մասին» N 5236-Ա հրամանի հավելվածի 14-րդ տողի (Գամալատ B6) 12-րդ սյունակի «05.09.2025» թվերը փոխարինել «04.08.2025» թվերով:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին:

3. ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը.

2) սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղի վերձևակերպված հավաստագրի տրամադրումը հայտատուին:

Invalid signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ